

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ՎԱՉԱԳԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՎ
ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(տեսություն և պրակտիկա)**

**Ը.00.01- «Տեսական տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսություն**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գրիգոր Ալեքսանի Ղարիբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Արմենակ Վաղարշակի Դարբինյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ալվարո Ալբերտի Խառատյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հունիսի 9-ին ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան փ. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թվականի հունիսի 8-ին:

015 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տեխ. գ. դ., պրոֆ՝



Ա.Վ. Առաքելյան

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Բնակչության եկամուտների, ծախսերի և խնայողությունների փոխառնչությունները հետազոտելու համար առանցքային հարց է բնակչության տնտեսական վարքագիծը: Իսկ բնակչության տնտեսական վարքագիծը իր գործառույթային նշանակությամբ հանգում է նրանց կենսագործունեության պայմանների հաստատմանը: Սպառում - խնայողություն հարաբերակցությունը հանդիսանում է վերարտադրողական գործընթացի հիմնական գործոններից մեկը, որը կարող է ազդել երկրի տնտեսական վիճակի վրա:

Տնային տնտեսությունների տնտեսական վարքագիծը չափազանց անհամասեռ երևույթ է, քանի որ այստեղ խոշոր դեր են խաղում սուբյեկտիվ շարժառիթները, տնտեսական գործողությունների մասին որոշումների կայացման մեջ նախապատվությունները և սահմանափակումները: Դրանով է պայմանավորված, որ տնային տնտեսությունների տնտեսական վարքագիծը հետազոտվում է քանակական և որակական դիրքերից, տնտեսագիտության, սոցիոլոգիայի, սոցիալական հոգեբանության, վարքագծային տնտեսագիտության տեսանկյունից: Այդ հետազոտություններն անհրաժեշտ են տնային տնտեսությունների խնայողական և ներդրումային ներուժի որոշման, սպառողական և փոխառուական վարքագծի վերլուծության և կանխատեսման համար: Ուստի անհրաժեշտություն է առաջանում համակողմանիորեն վերլուծել Հայաստանում տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի վրա ազդող տնտեսական և սոցիալ-հոգեբանական գործոնները, սպառողական և խնայողական վարքագծի շարժառիթները, եկամուտների, ծախսերի և խնայողությունների փոխառնչությունները:

Ատենախոսության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության նպատակն է ՀՀ պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա բացահայտել բնակչության եկամուտների, ծախսերի և խնայողությունների փոխառնչությունները, վերլուծել բնակչության տնտեսական վարքագծի տեսակները, դրանց վրա ազդող տնտեսական և սոցիալ-հոգեբանական գործոնները:

Այդ նպատակի իրագործման համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- Իրականացնել բնակչության սպառման և խնայողությունների տեսական հիմնադրույթների վերլուծություն:
- Իրականացնել բնակչության տնտեսական վարքագծի վրա ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալ-հոգեբանական տարբեր գործոնների ազդեցության վերլուծություն:
- Տարբերակել տնային տնտեսությունների սպառողական վարքագծի տեսակները և իրականացնել խնայողությունների տիպականացում:

- Իրականացնել ՀՀ տնային տնտեսությունների եկամուտների, վերջնական սպառողական ծախսերի և խնայողությունների փոխառնչության և եռամսյակային սեզոնայնության վերլուծություն:
- Մշակել տնային տնտեսությունների վերջնական սպառողական ծախսերի վրա բնակչության եկամուտների, սպառողական գների համաթվի և առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի ծավալների և տոկոսադրույքի ազդեցությունը բացահայտող ռեգրեսիոն մոդել:
- Իրականացնել ՀՀ առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների կառուցվածքի և դինամիկայի, դրա վրա ազդող գործոնների վերլուծություն:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Հետազոտության օբյեկտն է բնակչության եկամուտների, ծախսերի և խնայողությունների փոխառնչությունները:

Հետազոտության առարկան է տնային տնտեսությունների սպառողական և խնայողական վարքագծերի տեսակները և դրանց վրա ազդող տնտեսական և սոցիալ-հոգեբանական գործոնները:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության, վարքագծային տնտեսագիտության, տնտեսական հոգեբանության բնագավառում հայ և արտասահմանյան մի շարք հեղինակների աշխատությունները, գիտական և այլ հրապարակումները: Հետազոտության տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածուները, ՀՀ ԿԲ տարբեր տարիների վիճակագրական տեղեկագրերը: Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել «համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշի հաշվարկման ՀՀ ԱՎԾ մեթոդական ուղեցույցները, ռեգրեսիոն վերլուծություններ անելու էկոնոմետրիկ մեթոդները: Աշխատանքում վիճակագրական տվյալների հետազոտման և վերլուծության համար օգտագործվել են EViews 7 ծրագրային փաթեթը:

Ստացված հիմնական արդյունքները և գիտական նորույթը:

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության և վերլուծության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

1. Իրականացվել է բնակչության խնայողությունների ելության և բնույթի տարբերակում: Առաջ են քաշվել «ընթացիկ խնայողություններ», «առաջին անհրաժեշտության խնայողություններ», «ժամկետային նպատակադրմամբ

խնայողություններ» և «ծավալային նպատակադրմամբ խնայողություններ» հասկացությունները և տրվել է դրանց տնտեսագիտական մեկնաբանությունները, ինչպես նաև այլ հեղինակների կողմից առաջարկված խնայողությունների տեսակների համեմատ սկզբունքային տարբերությունները:

2. Եռամսյակային կտրվածքով հաշվարկվել են ՀՀ տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտները: Ստացված արդյունքների հիման վրա բացահայտվել է, որ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը բոլոր տարիներին առաջին եռամսյակում գերազանցում են նրանց համախառն տնօրինվող եկամուտները: Նաև բացահայտվել է, որ տնային տնտեսությունների ծախսերի ծավալները տարիների կտրվածքով դրսևորում են աճի միտում՝ եկամուտների աճին զուգընթաց, մինչ խնայողությունների ծավալները համեմատաբար հաստատուն են՝ չհաշված սեզոնայնությունը:
3. Մշակվել և ներդրվել է ՀՀ-ի համար նոր բազմագործոն ռեգրեսիան մոդել, որը թույլ է տալիս հաշվարկել առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրամադրված դրամային և դոլարային վարկերի ծավալների, դրանց տոկոսադրույքների, տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտների և սպառողական զանգվածի համաթվի ազդեցությունը տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի վրա:
4. Արված հաշվարկների և վերլուծությունների արդյունքում հիմնավորվել է, որ ավանդների ծավալների և կառուցվածքի վրա մեծ ազդեցություն են ունենում ինչպես փոխարժեքի փաստացի տատումները, այնպես էլ այդ տատանումների հետ կապված բնակչության սպասումները: Մշակվել է ավանդների կախվածությունը եկամտից ու տոկոսադրույքից բացահայտող նոր ռեգրեսիոն էկոնոմետրիկ մոդել:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության մեջ իրականացված տնտեսագիտական և սոցիալ-հոգեբանական տեսությունների համեմատական վերլուծությունները կարող են հիմք հանդիսանալ վարքագծային տեսություն և տնտեսական հոգեբանություն դասընթացների ծրագրերի մշակման և համալրման համար:

Ատենախոսությունում առաջարկված խնայողությունների տեսակներին վերաբերվող նոր գաղափարներն ու կանխավարկածները կարող են հիմք հանդիսանալ հետազոտողների, գիտական ոլորտի մասնագետների և ասպիրանտների համար հետագա զարգացման և ավելի խորը հետազոտման համար:

Մշակված բազմագործոն ռեգրեսիոն մոդելները և ցուցանիշների հաշվարկման մեթոդները կարող են օգտագործվել ՀՀ տնային տնտեսությունների սպառողական, խնայողական, ներդրումային և փոխառուական վարքագծերի վերլուծության և կանխատեսման համար, ՀՀ տնային տնտեսությունների ավանդների և վերջնական սպառողական ծախսերի եռամսյակային դինամիկայի և

դրա վրա տարբեր գործոնների հնարավոր ազդեցության կանխատեսման համար:

Չետագոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումը:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել և քննարկվել են Տնտեսագիտության Բարձրագույն Դպրոց Ազգային Չետագոտական Համալսարանի /ՌԴ, Մոսկվա/ 2010թ. կազմակերպած «Վարքագծային տնտեսագիտություն և տնտեսական հոգեբանություն» թեմայով միջազգային գիտաժողովում, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաժողովներում և ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 136 մեքենագիր էջի վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը և հետազոտման հրատապությունը ՀՀ-ում, ձևակերպվում են հետազոտության նպատակը և խնդիրները, հստակեցվում են հետազոտության օբյեկտը և առարկան, հակիրճ ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը, դրանց գործնական նշանակությունը, ինչպես նաև արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը («Բնակչության սոցիալ-տնտեսական վարքագծի տեսությունները») նվիրված է բնակչության տնտեսական վարքագծի տեսական հիմնադրույթների և բնակչության սպառման ու խնայողությունների վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնների վերլուծությանը:

Բնակչության տնտեսական վարքագիծը հանդիսանում է նրանց կենսագործունեության անբաժանելի մասը՝ անգամ բնահրային տնտեսական հարաբերությունների պայմաններում: Դեռ միջնադարում փիլիսոփաները, թեպետ այն չդարձնելով ուսումնասիրության առանձին առարկա, անդրադարձել են այս խնդրին: Մասնավորապես Արիստոտելը դրական էր վերաբերվում տնտեսվարության այն տեսակին, որը հանգում էր տան և պետության համար բարիքների ձեռք բերմանը: Ըստ Արիստոտելի, այդ բնական տնտեսական գործունեությունը իր մեջ ներառում էր նաև փոխանակումը՝ անձնական խելամիտ պահանջումները բավարարելու համար անհրաժեշտ սահմաններում: Մարդկանց տնտեսական վարքագծի վերաբերյալ մեկնաբանությունների կարելի է հանդիպել նաև Գրիգոր Տաթևացու աշխատություններում: Նա գտնում էր, որ մարդկային աշխատանքի շնորհիվ ստեղծվում են հոգևոր և ֆիզիկական պահանջումները բավարարող ապրանքներ, որը նա դասակարգում է հետևյալ կերպ՝ 1. առաջնակարգ պահանջումները բավարարող առարկաներ, 2. զարդարանքի և վայելչության առարկաներ: Թեև այդ առարկաները չեն բավարարում մարդու կենսական պահանջումները (ըստ Տաթևացու դրանք սնունդ են միայն տեսողությունը և մոլորեցնում միտքը), սակայն դրա փոխարեն բավարարում են մարդու «զարդարանքի ու վայելչության» պահանջը: Ի տարբերություն կենսական ապրանքների պահանջի՝ վայելչության ապրանքների ձեռքբերման ցանկությունը, ըստ Տաթևացու, չունի իր բնական սահմանը¹:

Շուկայական տնտեսական հարաբերությունների հաստատմամբ՝ բնատնտեսական արտադրանքային դուրս մղումը ընդգրկում է պատմական մի ժամանակահատված, որը մասնագիտական գրականությունում սովորաբար կոչվում է մերկանտիլիզմի շրջան²: Այս դպրոցի ներկայացուցիչների մոտ գերիշխող էր այն ենթադրությունը, որ երկիրը հարստանում է առևտրի ճանապարհով և կարևորվում էր առևտրի դրական հաշվեկշռի ապահովումը: Իսկ

¹ Մարտիրոսյան Ա.Ռ. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնառության նյութեր -, Եր.: Ոսկան Երևանցի, 2005, 320 էջ, էջ 68:

² Մարտիրոսյան Ա.Ռ. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնառության նյութեր, Եր.: Ոսկան Երևանցի, 2005, 320 էջ, էջ 78:

առևտրի դրական հաշվեկշռի ապահովման քաղաքականության մեջ իր առանձնահատուկ տեղն ունեւր բնակչության սպառողական վարքագիծը: Ուշ մերկանտիլիզմի ակնառու ներկայացուցիչներից Թոմաս Մանը առաջարկում էր պետական քաղաքականությամբ խրախուսել ներկրված ապրանքների սպառման կրճատումը:

Վիլյամ Պետին, ով համարվում է դասական քաղաքատնտեսության հիմնադիրը, խրախուսում էր «ակցիզային հարկը»: Ըստ Վ. Պետիի, արդարությունը պահանջում է, որ ամենքն վճարի համապատասխան իր սպառման և այս հարկը հեշտ է վճարել նրանց համար, ով բավարարվում է առաջին անհրաժեշտության ապրանքների սպառմամբ: Բացի այդ, այս հարկատեսակը դրդում է տնտեսողության, ինչը հանդիսանում է ազգի հարստացման միակ հնարավորությունը³:

Դասական քաղաքատնտեսության մեկ այլ կարկառուն ներկայացուցիչ՝ Ժան Բատիս Սեյի շուկաների օրենքը բառացիորեն շարադրված էր հետևյալ կերպ, որ ապրանքները փոխանակվում են ապրանքներով: Հետադարձ վերծանությամբ այն կարելի է ներկայացնել հետևյալ տրամաբանությամբ, որ ապրանքների գումարային գների մեծությունը հավասար կլինի եկամուտների՝ աշխատավարձի, շահույթի, ռենտայի գումարին: Հավասարման առաջին մասը կկազմի առաջարկի մեծությունը, երկրորդ մասը՝ պահանջարկի մեծությունը: Հետագայում առաջարկը ծնում է պահանջարկ հայտնի արտահայտությունը պարզապես քեյնսյան եզրահանգում էր, որ նա կատարեց այս մասով ընթերցելով Սեյի աշխատությունը⁴:

Ջ. Քեյնսը հիմնավորել է, որ սպառումը կախված է ոչ միայն եկամտից, այլ նաև սպառման սահմանային հակումից: Վերջինիս վերաբերյալ իր ենթադրությունները Ջ. Քեյնսը արտահայտել է այսպես՝ «Հիմնական հոգեբանական օրենքը, որի գոյության մեջ մենք կարող ենք միանգամայն վստահ լինել ոչ միայն ապրիորի ենթադրություններից, ելնելով մարդու էության մեր իմացությունից, այլև նախկին փորձի մանրամասն ուսումնասիրության հիման վրա, կայանում է նրանում, որ մարդիկ, որպես կանոն հակված են եկամտի աճի հետ ավելացնել իրենց սպառումը, բայց ոչ այն չափով, որով աճում են եկամուտները»⁵:

20րդ դարի 40 – 50-ական թվականներին նոր հետազոտությունների շնորհիվ ընդլայնվեց տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի մասին գիտական պատկերացումները: Ս. Կուլզնեցի հետազոտությունները ցույց տվեցին, որ երկարաժամկետ շրջանում եկամտի մեջ սպառման մասնաբաժինը շատ քիչ է փոխվում⁶: Ս. Կուլզնեցի եզրակացությունները կասկածի տակ դրեցին

³ История и философия экономики: пособие для аспирантов/ под ред. д-ра экон. наук, проф., засл. деятеля науки РФ М.В. Конотопова. – М.: КНОРУС, 2006.- 664 С, стр 428.

⁴ Սարտիրոսյան Ա.Ռ. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնառության նյութեր, խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Գ. Ա. Ղարիբյան -, Եր.: Ոսկան Երևանցի, 2005, 320 էջ, էջ 138:

⁵ Кейнс Дж.М. Общая теория занятости, процента и денег. /Антология экономической классики. В 2-х томах. Т.2. - М.: ЭКОНОВ, 1992. - Сс.294., с.157.

⁶ S. Kuznets, Economic Growth and Income Inequality, The American Economic Review, vol 45, No. 1, 1955, Pp 28, p20.

բացարձակ եկամտի վարկածը, որին փոխարինելու եկան վարքագծային տեսությունները, որոնց տարբերությունը կայանում է նրանում, որ նրանք ամբողջությամբ հրաժարվում են անհատների բանական վարքի մասին ենթադրություններից: Տվյալ ուղղության շրջանակներում ընդգծվում է, որ երբեմն անհատները ի վիճակի չեն լինում դիմագրավելու փողը ծախսելու ցանկությանը: Այս տեսությունների շարքին են դասվում օրինակ, «Հաստատուն եկամտի», «Հարաբերական եկամտի», «Կյանքի պարբերաշրջանի» կանխավարկածները: Չնայած որ այս տեսությունները հանդիսանում են տնտեսագիտական տեսություններ՝ դրանցում քննարկվում է նաև տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի վրա սոցիալական և հոգեբանական գործոնների ազդեցությունը: Հաստատուն եկամտի տեսությունը, որը մշակվել է հիսունական թվականներին Մ.Ֆրիդմանի կողմից⁷, ենթադրում է, որ բնակչությունը սպառման և խնայողությունների մասին որոշում է ընդունում իր կյանքի ողջ ընթացքում սպասվող համախառն եկամտի հիման վրա: «Հաստատուն եկամուտ» հասկացողությունը ներկայացվում է, որպես ապագայում սպասվող եկամուտների միջին կշռված մեծություն, իսկ ընթացիկ եկամտի և հաստատուն եկամտի միջև տարբերությունը համարվում է պատահական եկամուտ:

Սպառման համահարթեցման գաղափարը օգտագործվում է նաև «Կյանքի պարբերաշրջանի» կանխավարկածում, որը զարգացրել են Ա. Անդոն և Ֆ. Մոդիգլիանին⁸: Կարելի ասել, որ ընդհանուր առմամբ՝ այս հիպոթեզում մարդկանց տնտեսական վարքագծի համար որոշիչ գործոն է հանդիսանում «տնային տնտեսության տարիքը»: Առաջարկվում է առանձնացնել կյանքի երեք պարբերաշրջաններ, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ է տնտեսական վարքագծի ուրույն առանձնահատկություններ:

«Հաստատուն եկամտի» և «Կյանքի պարբերաշրջանի» կանխավարկածներից սկզբունքորեն տարբերվում է Ջ.Ս. Դյուսենբերիի առաջարկած «Հարաբերական եկամտի» կանխավարկածը: Այս սկզբունքային տարբերությունը կայանում է նրանում, որ առաջարկվում է սպառման ֆունկցիա, որը կախված է ոչ այնքան անձնական եկամուտներից կամ դրանց սպասումներից, ինչքան որ ուրիշ մարդկանց սպառումից: Ընդ որում, ազդեցիկ են ոչ միայն անմիջական շփման սոցիալական շրջանակների, այլ նաև «էտալոնային» խմբերի սպառողական վարքագծերը: Այս դեպքում մարդկանց համար համեմատման չափանիշ հանդիսանում է որոշ թիրախային խմբերի սպառողական վարքագիծը, իսկ սեփական վարքագծի ձևավորման շարժառիթ է հանդիսանում հասարակության առավել «էլիտար խավերի» պատկանելու ձգտումը: Արդյունքում՝ «հարաբերական եկամտի ցանկացած տրված բաշխման համար անհատի կողմից խնայված եկամտի մասնաբաժինը հակված է լինելու եզակի, անփոփոխ և աճող ֆունկցիա՝ կախված եկամուտների բաշխման մեջ ունեցած իր տոկոսային մասնաբաժնից: Խնայված եկամտի տոկոսային մասը

7 T. Veblen, A Theoretical Framework for Monetary Analysis. New York, National Bureau of Economic Research; distributed by Columbia University Press, 1971, Pp.69.

8 M A Ando and F Modigliani, 'Tests of the Life Cycle Hypothesis of Saving: Comments and Suggestions', Oxford Institute of Statistics Bulletin, vol. xix (May, 1957), 99-124.

անկախ է եկամտի բացարձակ մակարդակից»⁹: «Հարաբերական եկամտի» կանխավարկածի մյուս կարևոր ենթադրությունն այն է, որ ընթացիկ սպառումը կախված է ոչ միայն ընթացիկ եկամտի մակարդակից, այլ նաև նախկինում արված սպառման ծավալներից: Դյուսենբերին գտնում էր, որ մարդկանց սպառողական վարքագիծը կարող է բացատրվել մի «հոգեբանական ֆունդամենտալ պոստուլատով», ըստ որի՝ տնային տնտեսության համար ավելի դժվար է կրճատել սպառման ծավալները, քան ի սկզբանե խուսափել նման սպառումից¹⁰: Մյուս կողմից՝ մարդիկ ավելի հրեշուխամբ ավելացնում են սպառման ծավալները եկամուտների աճի դեպքում, քան հետո կրճատում՝ եկամուտների նվազման դեպքում¹¹:

Ջ. դե Գրաֆը, Դ. Վանը և Թ.Յ. Նեյլորը իրենց «Ընչաքաղցություն՝ անհագ սպառման համաճարակ» գրքում նույնպես անդրադառնում են մարդկանց սպառողական վարքագծի վրա սոցիալ-հոգեբանական գործոնների ունեցած ազդեցությանը: Նրանք նշում են, որ «ամենքը, ցանկանալով համեմատվել ավելի հարուստ կամ բարձր վարձատրվող մարդկանց հետ, գիտակցաբար, թե անգիտակցաբար տարածում է գերսպառման հակվածության վիրուսը, ինչն էլ աննախադեպ արագությամբ մեծացնում է մարդկանց պահանջունքներն ու ձգտումները»¹²: Մարդկանց սպառման և իրենց վարկանիշի մեջ եղած ուղղակի կապի մասին է վկայում նաև Թ. Վեբլենի նկարագրած «ցուցադրական սպառման» ֆենոմենը: «Այն համայնքում կամ դասակարգում ընդունված սպառման չափանիշները, որին մարդ պատկանում է, զգալիորեն հարկադրում են նրա կենսամակարդակը»¹³: Յ. Լեբենստեինը, հետազոտելով սպառողական ապրանքների պահանջարկի շարժառիթները, այս ֆենոմենը դիտում է որպես պահանջարկի վրա ազդեցություն ունեցող հիմնական արտաքին գործոններից մեկը՝ անվանելով «Վեբլենի էֆեկտ»: Որպես պահանջարկի վրա ազդեցություն ունեցող արտաքին գործոններ, հեղինակը առանձնացնում է նաև «պճնամուլի» և «մեծամասնությանը միանալու» էֆեկտները: «Մեծամասնությանը միանալու» էֆեկտով պայմանավորված պահանջարկի դրսևորման համար շարժառիթ է հանդիսանում այն հանգամանքը, որ այլ մարդիկ էլ են սպառում այդ բարիքից: Երկրորդ հակառակն է «պճնամուլի էֆեկտի» ազդեցությունը: Այս դեպքում կոնկրետ բարիքի հանդեպ եղած անձնական պահանջարկը հակադարձ համեմատական է այլ մարդկանց սպառման ծավալներին:

Հոգեբանական և սոցիոլոգիական տեսությունները հիմնված են այն ենթադրության վրա, որ տնտեսական վարքագծի արտաքին գործոնների ազդեցության բնույթը պայմանավորված է անհատի ներքին բնութագրիչներով,

⁹Duesenberry, J. S. (1949). *Income, Saving, and the Theory of Consumer Behavior*. Cambridge, MA: Harvard University Press, Pp 128, p. 3.

¹⁰Same place, Pp. 58-59.

¹¹Smyth D.J. *Toward a theory of saving // The economics of saving / Ed. by J.H. Gapsinski*. Boston: Kluwer Academic Publishers, 1993. Pp. 47-92. P 58-59.

¹²John De Graaf, David Wann, Thomas H. Naylor, *Affluenza: the all-consuming epidemic*:Berrett-Koehler Publishers, 2001, pp.23-31.

¹³Thorstein Veblen. *THE THEORY OF THE LEISURE CLASS. An Economic Study in the Evolution of Institutions*. Macmillan, NY, 1899, Pp. viii + 400, p. 111.

ինչպիսին են «շարժառիթները, ձգտումները և սպասումները»¹⁴: Ի տարբերություն նեոդասական դպրոցի՝ այս ուղղության տեսաբանները կարծում են, որ անհատների նախապատվությունները ոչ թե տրված են, այլ որոշվում են տնտեսական և սոցիալական պայմաններով:

Ջ.Կատոնան պնդում է, որ խնայողությունը հանդիսանում է ֆունկցիա երկու՝ խնայելու հնարավորություն և խնայելու ցանկություն փոփոխականներով: Սպառման հոգեբանական և սոցիոլոգիական տեսությունների այլ կողմնակիցներ որպես խնայողական վարքի գործոններ առաջարկում են ընտանեկան հարաբերությունները¹⁵, խնայողության նախկին փորձը¹⁶ և այլն:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի տեսակները և դրանց վրա ազդող գործոնները» գլուխը նվիրված է տնային տնտեսությունների սպառողական վարքագծի տեսակների, ինչպես նաև խնայողությունների էության, տեսակների և խնայողական վարքագծի վրա ազդող գործոնների վերլուծությանը: Առաջ են քաշվում երեք հիմնական գործոններ, որոնք ազդեցություն են գործում պարտքով սպառելու կամ խնայողություն անելու մասին որոշում կայացնելու վրա.

1) բարոյական բավարարվածություն (ԲԲ) բարիքների «այստեղ և հիմա» սպառումից, որը կախված է կոնկրետ անհատի (տնային տնտեսության) հոգեբանական և այլ բնութագրիչներից,

2) տնային տնտեսությունների եկամուտների, երկրում քաղաքական և տնտեսական գործոնների հետ կապված ապահովության զգացումը:

3) տնային տնտեսության տնտեսական անկախության կարևորությունը (ՏԱ):

Երբ գործում է «ԲԲ + ԱԶ > ՏԱ» հարաբերակցությունը, տնային տնտեսությունն իր վրա լրացուցիչ պարտավորություններ է վերցնում, և սպառում է իր եկամուտներից ավելի: Երբ գործում է «ԲԲ + ԱԱ < ՏԱ» հարաբերակցությունը, տնային տնտեսությունը ձևավորում է խնայողություններ:

Տնային տնտեսությունների փոխառուական վարքագծի վրա ազդող տնտեսական գործոնների շարքում առանձնացրել ենք մի շարք գործոններ, որոնք էական ազդեցություն ունեն փոխառուական վարքագծի և փոխատուի (անհատ, թե կազմակերպություն) ընտրության վրա: Դրանց թվում կարելի է նշել՝

1) փոխառուական գործողության պարբերականությունն ու հաճախականությունը, 2) փախառության չափը, 3) հետ վճարման ժամկետը, 4) տոկոսադրույքի չափը, 5) վարկի հասանելիությունը (ֆինանսական կազմակերպությունից վարկ վերցնելու համար հաճախորդը պետք է բավարարի վարկունակության որոշակի չափանիշների, որոնք բացակայում են անհատից պարտքով գումար վերցնելու պարագայում):

Բացի նշված տնտեսական գործոններից, փոխառուական վարքագծի վրա ազդեցություն են ունենում նաև մի շարք սոցիալ-հոգեբանական գործոններ: Ս.

¹⁴ Beverly S.G. and M. Sherraden. Institutional Determinants of Saving Implications for Low-Income Households and Public Policy // Journal of Socio- Economics Vol.28. - issue 4 1999. - Pp.457-474, p 159.

¹⁵ Cohen S. Consumer Socialization Children s Saving and Spending //Childhood Education.- 70(4).-1994.- Pp.244-246.

¹⁶ Fumham A. Why Do People Save Attitudes to. And Habits of Saving Money in Britain // Journal of Applied Social Psychology. - 15(4). - 1985. - Pp.354-373., p. 355.

Լիին, Պ. Վերլին և Բ. Վոլքերը փոխառուական վարքագծի վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնները հետազոտելիս առանձնացրել են ութ գործոններ¹⁷: Դրանք են՝ 1) սոցիալական համեմատությունները, 2) անհրաժեշտության ընկալումը, 3) փոխառության հասարակական ընկալումը, 4) ընտանիքի վերաբերմունքը փոխառության նկատմամբ, 5) փողի տնօրինման վերահսկողությունը, 6) մինչժամանակային նախապատվությունները, 7) փոխառության հանդեպ վերաբերմունքը, 8) իրավիճակի վերահսկելիության ընկալումը:

Հաճախ տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի հետազոտություններում և վերլուծություններում պահանջարկի բավարարմանը ուղղված գործողությունները ներկայացվում են, որպես խնայողություններ անելու, կամ փոխառություն վերցնելու երկընտրանք: Սակայն 1990-ական թվականներին Ս. Լիվինգտոնը և Պ. Լունտը իրականացրել են մի շարք հետազոտություններ, որոնք ցույց են տվել, որ ժամանակակից պայմաններում ճիշտ չէ խնայողական և փոխառուական վարքագծերը դիտարկել, որպես տնտեսական վարքագծի հակադարձ բևեռներ: Նրանք բացահայտել են խնայողությունների և փոխառությունների տարբեր համադրություններ և հանգել հետևյալ հետևությանը՝ «Մարդկանց սպառողական ռազմավարությունները կազմում են որոշակի կոնտինիում (անընդհատություն)՝ սկսած նրանից, որոնք չունեն ո՛չ խնայողություններ, ո՛չ էլ փոխառություններ, վերջացրած այսպիսիներով, որոնք ունեն թե՛ խնայողությունների, թե՛ փոխառությունների տարբեր տեսակներ»¹⁸:

Միևնույն ժամանակ և՛ պարտքեր, և՛ խնայողություններ ունեցող տնային տնտեսությունների մասին որոշակի տեղեկություններ կան նաև այլ հետազոտություններում: Օրինակ՝ Տ. Բոգոմոլովան և Վ. Տապիլիան, օգտագործելով «տնային տնտեսությունների տնտեսական կարգավիճակի և առողջության վերաբերյալ ռուսական մոնիտորինգի արդյունքները», տարբերակել են տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի չորս մոդել՝ խնայողներ (տնտեսողներ)՝ 15-20%, չխնայողներ (որոնք հիմնականում պարտք են վերցնում)՝ 15-20%, պասիվ մոդել (չունեն ոչ խնայողություններ, ոչ փոխառություններ)՝ 50-55% և խառը մոդել (ունեն և՛ խնայողություններ և՛ պարտքեր)՝ 8-10%¹⁹:

Այս և այլ հետազոտությունների շնորհիվ այսօր արդեն կարելի է վստահորեն ասել, որ տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի տիպականացում իրականացնելիս հնարավոր չէ տնային տնտեսություններին տարանջատել խնայողություններ անողների կամ փոխառություն վերցնողների: Այս առումով, տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի վերլուծության անբաժանելի մասն են կազմում խնայողությունները:

¹⁷ Lea S.E.G., Webley P., Walker C.M. Psychological factors in consume debt: Money management, economic socialization, and credit use // Journal of Economic Psychology. 1995. Vol. 16. Pp. 681-701.

¹⁸ Лунт П. Психологические подходы к потреблению: вчера, сегодня, завтра /Пер. с англ. Н.А. Алмаева // Иностранная психология. 1997. № 9. С. 8–16.

¹⁹ Богомолова Т.Ю., Тапилина В.С. Кто на что тратит... Финансовое поведение российских домохозяйств // ЭКО. 1998. № 10. С. 119-128, с 126.

Տնտեսագիտական գրականության մեջ չկա խնայողությունների էության համընդհանուր սահմանում: Խնայողությունները հաճախ դիտարկվում են որպես բնակչության կուտակված ունեցվածքի կամ հարստության մաս²⁰: Առավել հաճախ, խնայողությունները մեկնաբանվում են, որպես որոշակի ժամանակահատվածում եկամտի չօգտագործված մասը²¹: Որոշ դեպքերում խնայողությունները նույնացվում են, որպես բնակչության ֆինանսական ներուժ, որը իրենից ներկայացնում է ժամանակավորապես ազատ կամ պահուստային դրամական միջոցներ, որոնք կարող են օգտագործվել ներդրումային նպատակներով²²:

Զիերթելով նշված մոտեցումները՝ այնուամենայնիվ պետք է նշենք, որ դրանք ընդգծում են հասկացության առանձին կողմերը: Առաջին դեպքում ընդգծվում է խնայողությունների կուտակային բնույթը սուբյեկտների շահերի տեսակետից, իսկ վերջինում՝ հասարակության համար նրանց ներդրումային նշանակությունը:

Անհրաժեշտ է խնայողությունները առանձնացնել ունեցվածքից և ներդրումներից: Խնայողությունները ոչ միշտ են վերածվում ներդրումների, իսկ ներդրումների ֆինանսավորումը կարող է իրականացվել չօգտագործված արտադրական հնարավորությունների կամ վարկավորման հաշվին: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ հարկ ենք համարում իրականացնել տնային տնտեսությունների էության վերլուծություն և խնայողությունների տիպականացում: Տիպականացման շրջանակներում առաջ են քաշվում այնպիսի հասկացություններ, ինչպիսի են՝ «ընթացիկ խնայողությունները», «առաջին անհրաժեշտության խնայողությունները», «ծավալային նպատակադրմամբ խնայողությունները» և «ժամկետային նպատակադրմամբ խնայողությունները»:

Ընթացիկ խնայողություններ/ տնտեսված ֆինանսական միջոցներ: Սա եկամուտների այն մասն է, որը դեռ չի ծախսվել, սակայն նախատեսված է ընթացիկ ժամանակահատվածում սպառման վրա ծախսելու համար: Այսինքն, տվյալ պարագայում խնայողությունները հանդիսանում են ընթացիկ ժամանակահատվածի եկամուտների դեռևս անբողջությամբ չծախսված, տնտեսված մնացորդը: Ընթացիկ ժամանակահատվածը սահմանելիս հարկ է հաշվի առնել եկամուտների ստացման պարբերականությունն ու սեզոնայնությունը: Օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում եկամուտները խիստ սեզոնային են՝ ամռան ամիսներին դրանք կարող են ունենալ շաբաթական պարբերականություն, իսկ ձմռան ամիսներին՝ ընդհանրապես չլինել: Ուստի այս բնագավառում, հարկ է որպես ընթացիկ ժամանակահատված համարել տարին:

Կարծում ենք, որ ճիշտ չէ ընթացիկ խնայողությունները դիտարկել, որպես ներդրումային կապիտալ: Դրանք ավելի շուտ հանդիսանում են սպառման համահարթեցման մեխանիզմ: Այս ենթադրությունը տարբերվում է «կյանքի

²⁰ Балабанов Т.Н./ Финансы граждан: (Как россиянам создать и сохранить богатство) /- М. : Финансы и статистика, 1995. - 222 С, с. 15.

²¹ Кашин Ю. Финансовые активы населения (сбережения): подход к оценке уровня жизни. // Вопросы статистики. 1998. № 5 43-51 С.,с.44.

²² Пльшевский Б. Сбережения и инвестиции в российской экономике периода реформ. //Экономист. - 2003. - №2.-С.43.

պարբերաշրջանի» կանխավարկածից նրանով, որ եկամուտները տնտեսվում են ընթացիկ ժամանակահատվածում սպառման մակարդակի համահարթեցման համար: Իսկ «կյանքի պարբերաշրջանի» կանխավարկածում ընթացիկ եկամուտները ոչ թե տնտեսվում են, այլ վերածվում են խնայողության՝ հետագա ժամանակահատվածներում, կյանքի ողջ ընթացքում սպառման համահարթեցման նպատակով:

Առաջին անհրաժեշտության խնայողություններ: Խնայողություններ, որոնք արվում են ոչ հեռու ապագայում նախատեսված անհրաժեշտ ծախսերը հոգալու համար: Անհրաժեշտ ծախսեր կարող են լինել օրինակ ուսման վարձը, կամ էլ կյանքին վտանգ սպառնացող առողջական խնդիրները հոգալու համար նախատեսված ծախսերը: Այլ կերպ ասած՝ սրանք խնայողություններ են, որոնք նախատեսված են ապագայում առաջին անհրաժեշտության ծախսերը հոգալու համար: Հարկ է նշել, որ տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում առաջին անհրաժեշտություն համարվող ծախսերը: Օրինակ՝ մեր իրականությունում առաջնային անհրաժեշտության խնդիր է համարվում երեխաներին հետոպրոցական ուսում ապահովելը: ՀՀ տարբեր գյուղերում իրականացված դիտարկումները վկայում են այն մասին, որ երեխաների ուսման համար անհրաժեշտ ծախսերը հաճախ արվում են ընթացիկ սպառման խիստ սահմանափակման, ինչպես նաև տարվա ընթացքում անհավասարաչափ կենսամակարդակ և կյանքի որակ ապահովելու հաշվին: Ասվածի վառ օրինակ է հանդիսանում այն հանգամանքը, որ գյուղաբնակ ընտանիքները ձմռանը, խուսափելով ջեռուցման ծախսերից, սահմանափակում են իրենց տան բնակելի մակերեսը: Իսկ կյանքի որակի նվազեցման հաշվին ջեռուցման վրա խնայված գումարները կարող են ուղղվել երեխայի ուսման ծախսերը հոգալուն: Ուստի առաջին անհրաժեշտության խնայողությունները իրենց էությամբ սկզբունքորեն տարբերվում են սպառման մակարդակի համահարթեցման նպատակով արվող խնայողություններից:

Ծավալային նպատակադրմամբ խնայողություններ: Խնայողություններ, որոնք նպատակաուղղված արվում են ապագայում խոշոր ծախսեր անելու նպատակով: Այս խնայողությունները ծախսվելու են այն ժամանակ, երբ հասնեն նախատեսված ծախսերը հոգալու համար բավարար մակարդակի: Կախված նպատակի կարևորությունից՝ այս տեսակի խնայողությունները ևս կարող են արվել ընթացիկ սպառման մակարդակի խիստ սահմանափակման հաշվին:

Ժամկետային նպատակադրմամբ խնայողություններ: Խնայողություններ, որոնք կապված են առողջության պահպանման պրոֆիլակտիկ գործողությունների, արարողությունների, ժամանցի կամ էլ հանգստի ծախսերի հետ: Նկատենք, որ այս խնայողությունները, արվում են հստակ նպատակի վրա հստակ ժամկետներում ծախսելու համար՝ ի տարբերություն «նախազգուշողական» խնայողությունների, որոնք արվում են, որպես ապահովագրություն՝ առողջության հանկարծակի, չնախատեսված վատթարացման պարագայում: Ընդ որում, դրանք նախատեսված ժամկետներում ծախսվելու են անկախ կուտակված ծավալներից՝ ի տարբերություն ծավալային նպատակադրմամբ խնայողությունների: Իսկ նպատակների իրականացման

համար չբավականացող ֆինանսական միջոցները կարող են համալրվել փոխառությունների հաշվին: Տվյալ, ինչպես նաև «ծավալային նպատակադրմամբ խնայողությունները» արվում են անկախ այն հանգամանքից, թե որքան է ֆինանսական շուկայի եկամտաբերությունը:

Այս տիպականացումը անելու հիմքում ընկած են երկու հիմնական կանխավարկած, որոնք հակասում են տնտեսագիտության տեսության մեջ ընդունված ենթադրություններին:

1. Խնայողությունները ոչ միշտ են արվում են ընթացիկ պահանջումների լիարժեք բավարարումից հետո: Հաճախ դրանք կարող են արվել ընթացիկ սպառման խիստ սահմանափակման և որոշ պահանջումների անբավարարված մնալու հաշվին:
2. Արվող խնայողությունները ոչ միշտ են զգայուն ֆինանսական համակարգի եկամտաբերության հանդեպ: Հաճախ խնայողություններ կարող են արվել անգամ զրոյական եկամտաբերության պայմաններում:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ տնային տնտեսությունների եկամուտների, ծախսերի և խնայողությունների փոխառնչությունները» գլուխը նվիրված է ՀՀ օրինակով տնային տնտեսությունների սպառման և խնայողությունների հարաբերակցության և դինամիկայի, տնային տնտեսությունների վերջնական սպառողական ծախսերի և ավանդների ծավալների ու կառուցվածքի վրա ազդող գործոնների վերլուծությանը:

Տնային տնտեսությունների եկամուտների, ծախսերի և խնայողությունների փոխառնչությունները վերլուծելու համար նախ եռամսյակների կտրվածքով հաշվարկվել է «համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշը:

«Համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշի ձևավորման եռամսյակային միտումները ներկայացված են ստորև՝

Աղյուսակ 2

«Համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշի ձևավորման միտումները՝ ըստ եռամսյակների

	2005	2006	2007	2008
1ին եռամսյակ	0.15	0.14	0.13	0.14
2րդ եռամսյակ	0.22	0.23	0.22	0.23
3րդ եռամսյակ	0.31	0.32	0.32	0.34
4րդ եռամսյակ	0.33	0.31	0.32	0.29

Ստացված արդյունքներից ակնհայտ երևում է, որ ցուցանիշի ձևավորման եռամսյակային միտումները դիտարկված բոլոր տարիներին պահպանվում են: Այնուհետև այս ցուցանիշի՝ ձևավորման եռամսյակային համամասնություններով

տրոհվել է «տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ» տարեկան ցուցանիշը: Այս քայլը հիմնավորվում է այն փաստով, որ «տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ» ցուցանիշը տարեկան կտրվածքով կազմում է «համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշի շուրջ 75 տոկոսը:²³


«Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ» ցուցանիշի ստացված եռամսյակային ծավալները ներկայացված են ստորև՝

Աղյուսակ 3

Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտն՝ ըստ եռամսյակների
(նլն. դրամ)

	2005	2006	2007	2008
1ին եռամսյակ	262437.62	290627.82	316842.60	390688.65
2րդ եռամսյակ	372868.80	476952.23	524731.71	621098.66
3րդ եռամսյակ	528063.79	657414.62	759374.79	940256.41
4րդ եռամսյակ	567376.79	655337.33	755789.90	780939.28

Ստացված արդյունքները համադրվել տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր ցուցանիշի հետ, որը ԱՎԾ-ն հրապարակում է եռամսյակների կտրվածքով: Ստացված արդյունքները գրաֆիկորեն ներկայացված են ստորև՝



Գծապատկեր 1

Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտների, վերջնական սպառման ծախսերի ու խնայողությունների եռամսյակային դինամիկան

1 Գծապատկերից երևում է, որ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը բոլոր տարիներին առաջին եռամսյակում գերազանցում են

²³ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ, 2004-2008, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, ք. Երևան 2010թ., էջ 29, էջ 97:

նրանց համախառն տնօրինվող եկամուտները՝ խնայողություններին տալով բացասական արժեք: Ամփոփելով վերլուծությունը՝ արձանագրենք ստացված ուշագրավ արդյունքները:

- Տնային տնտեսությունների ծախսերի ծավալները տարիների կտրվածքով դրսևորում են աճի միտում՝ եկամուտների աճին զուգընթաց, մինչ խնայողությունների ծավալները համեմատաբար հաստատուն են՝ չհաշված սեզոնայնությունը:
- Չնայած որ տնային տնտեսությունները վերջնական սպառման ծախսերում նույնպես առկա է սեզոնայնություն, կարելի է պնդել, որ տնային տնտեսությունները անում են սպառման որոշակի համահարթեցում՝ տարվա վերջում անելով խնայողություններ, իսկ սկզբում օգտագործելով առկա խնայողությունները՝ ընթացիկ ժամանակահատվածում եկամուտները գերազանցող ծախսերը հոգալու համար:

Այնուհետև մշակվել է բազմագործոն ռեգրեսիոն մոդել, որը թույլ է տալիս հաշվարկել առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրամադրված դրամային և դոլարային վարկերի ծավալների, դրանց տոկոսադրույքների, տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտների և սպառողական գների համաթվի ազդեցությունը տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի վրա:

Տնային տնտեսությունների սպառողական վարքագծի վրա ազդող գործոնների վերլուծության համար առաջարկում ենք հետևյալ մոդելը՝

$$\ln C_t = c_0 + c_1 \ln CPI_t + c_2 \ln CR_t^{amd} + c_3 \ln CR_t^{usd} + c_4 \ln TINC_t + c_5 \ln TINC_{t-1} + \varepsilon_t \quad (1)$$

որտեղ՝

$\ln C_t$ - ն Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն են t ժամանակահատվածում²⁴,

$\ln CPI_t$ - ն սպառողական գների ինդեքսն է t ժամանակահատվածում (Գների միջին ամսական փոփոխությունները եռամսյա կտրվածքով)²⁵,

$\ln CR_t^{amd}$ - ն առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրամադրված դրամային վարկերի եռամսյակային ծավալն է t ժամանակահատվածում,

$\ln CR_t^{usd}$ - ն առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրամադրված դոլարային վարկերի եռամսյակային ծավալն է t ժամանակահատվածում²⁶,

$\ln TINC_t, \ln TINC_{t-1}$ - Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտն է t և $t-1$ ժամանակահատվածներում²⁷,

²⁴ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ազգային հաշիվները, 2010, էջ 192, 193:

²⁵ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005թ. հունվար-դեկտեմբերին, էջ 76, ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2006թ. հունվար-դեկտեմբերին, էջ 72, ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007թ. հունվար-դեկտեմբերին, էջ 63, ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 61:

²⁶ Թվերը ստացվել են հեղինակների հաշվարկներով՝ ՀՀ ԿԲ տրամադրած տեղեկատվության հիման վրա:
²⁷ Թվերը ստացվել են հեղինակների հաշվարկներով՝ ՀՀ ԱՎԾ տրամադրած տեղեկատվության հիման վրա: Հաշվարկների մեթոդաբանական պարզաբանումները տրված են սույն ժողովածույում, էջ՝ «Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտների, վերջնական սպառման ծախսերի և խնայողությունների փոխառընչությունը»:

$C_0, C_1, C_2, C_3, C_4, C_5$ - ը մոդելի անհայտ պարամետրերն են,
 ε_t - ն մոդելի սխալն է t ժամանակահատվածում,
 t –ն այն ժամանակահատվածն է, որի կտրվածքով իրականացվել է վերլուծությունը: Վերջինս ընդգրկում է մոդելում առկա բոլոր տնտեսական ցուցանիշների եռամսյակային տվյալները 2005-2008 թվականների համար:

Փոքրագույն քառակուսիների մեթոդով գնահատելով այս մոդելը՝ պարզվել է, որ դոլարային վարկերի գնահատված ծավալները էական գործոն չեն այս մոդելի շրջանակներում: Հանելով այդ փոփոխականը և նորից գնահատելով մոդելը՝ ստացել ենք հետևյալ արդյունքները՝

$$\ln C_t = 14.61 - 2.26 \ln CPI_t + 0.07 \ln CR_t^{amd} + 0.48 \ln TIN C_t + 0.11 \ln TIN C_{t-1} \quad (1.1)$$

(3.85)
(0.82)
(0.01)
(0.03)
(0.02)

[3.80]
[-2.74]
[11.70]
[17.78]
[4.66]

Ճշգրտված R քառակուսի/ Adjusted R-squared: 0.994
 Դարբին- Վաթսոն վիճ/ Durbin-Watson stat: 1.971
 F Վիճակագրություն/ F-statistic: 439.891
 Հավանական. (վիճակագրություն)/ Prob(F-statistic): 0.000

Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ այլ հավասար պայմաններում տնային տնտեսությունների՝ ընթացիկ ժամանակահատվածում տնօրինվող համախառն եկամուտների մեկ միավորով աճը հանգեցնում է նրանց վերջնական սպառման ծախսերի ավելացման՝ 0.48 միավորով: Այսինքն, ստացվում է, որ ՀՀ տնային տնտեսությունները իրենց եկամուտների կեսից ավելին խնայում են: Այս ենթադրությունը առաջին հայացքից կարող է անարժանահավատ թվալ: Սակայն հարկ է հիշել, որ ըստ մեր արված վերլուծության, տնային տնտեսությունները տարվա ընթացքում անում են սպառման մակարդակի համահարթեցում: Իսկ այն հանգամանքը, որ խնայողությունները պարբերաբար զրոյանում են, հիմք է տալիս ենթադրելու, որ մենք գործ ունենք ոչ թե մնացորդային խնայողությունների, այլ ընթացիկ խնայողությունների, տնտեսված գումարների հետ: Այսինքն, տնային տնտեսությունները իրենց ընթացիկ եկամուտների կեսից ավելին ոչ թե խնայում են, այլ տնտեսում՝ տրամադրելով հետաձգված սպառմանը:

Նշենք, որ մոդելում դրամային և դոլարային վարկերի ռեգրեսորները վերցվել են իրենց գնահատականներով, որի նպատակով դիտարկվել են հետևյալ երկու միջանկյալ մոդելները.

$$\ln CR_t^{amd} = \alpha_0 + \alpha_1 \ln R_t^{amd} + \varepsilon_t^1 \quad (2)$$

$$\ln CR_t^{usd} = \beta_0 + \beta_1 \ln R_t^{usd} + \varepsilon_t^2 \quad (3)$$

որտեղ

$\ln R_t^{amd}$ - ն դրամային վարկերի միջին կշռված տոկոսադրույքն է t ժամանակահատվածում,

$\ln R_t^{usd}$ - ն դոլարային վարկերի միջին կշռված տոկոսադրույքն է t ժամանակահատվածում,

$\alpha_0, \alpha_1, \beta_0, \beta_1$ - ն մոդելի անհայտ պարամետրերն են,

$\varepsilon_t^1, \varepsilon_t^2$ - ն մոդելի պատահական սխալներն են:

Կատարելով մի շարք թվաբանական գործողություններ՝ ստացվել են հետևյալ գնահատված մոդելները՝

$$\widehat{\ln CR_t^{amd}} = 77.25 - 20.2 \ln R_t^{amd} \quad (2.1)$$

$\begin{matrix} (4.25) & (1.43) \\ [18.2] & [-14.1] \end{matrix}$

Ճշգրտված R քառակուսի/Adjusted R-squared: 0.931

Դարբին-Վաթսոն վիճ. / Durbin-Watson stat: 1.403

F վիճակագրություն/ F-statistic: 103.449

Հավանակ. (F- վիճակագրություն)/ Prob(F-statistic): 0.000

$$\widehat{\ln CR_t^{usd}} = 21.5 - 2.02 \ln R_t^{usd} \quad (3.1)$$

$\begin{matrix} (0.74) & (0.31) \\ [19.6] & [-6.56] \end{matrix}$

Ճշգրտված R քառակուսի/Adjusted R-squared: 0.789

Դարբին-Վաթսոն վիճ. / Durbin-Watson stat: 1.652

F վիճակագրություն/ F-statistic: 29.098

Հավանակ. (F- վիճակագրություն)/ Prob(F-statistic): 0.000

Ստացված արդյունքների հիման վրա՝ կարելի է եզրակացնել, որ տնային տնտեսությունները 2005-2008թթ ժամանակահատվածում շահագրգռված են եղել վերցնել դրամային վարկեր, և այդ շարժառիթների համար ազդեցիկ գործոն է հանդիսացել տոկոսադրույքը: Դրամային վարկեր վերցնելու տնային տնտեսությունների նման շահագրգռվածությունը կարող է պայմանավորված լինել նաև դրամ-դոլար փոխարժեքի աճի սպասումներով:

Մյուս կողմից՝ տոկոսադրույքի չնչին աճը կարող էր հանգեցնել առևտրային բանկերից վերցվող վարկերի ծավալների կրճատման: Սա կարելի է բացատրել տոկոսադրույքների բարձր մակարդակով: Այսինքն, տոկոսադրույքները գտնվել են սահմանային մակարդակի վրա, որից ավել բարձրացումը զգալիորեն բացասաբար է ազդում վարկ վերցնելու շարժառիթների, հետևաբար նաև վարկերի ծավալների վրա: Փոխարժեքի աճի ակնկալիքները նույն տրամաբանությամբ կարող են պայմանավորել ինչպես դրամային վարկերի նկատմամբ մեծ պահանջարկը, այնպես էլ՝ դոլարային վարկերի նկատմամբ ցածր պահանջարկը: Սակայն, տնային տնտեսություններին տրամադրված վարկերի ծավալների միտումները ուսումնասիրելիս, պետք չէ անտեսել նաև բանկերի վարած վարկային քաղաքականության գործոնը: Առևտրային բանկերի՝ դոլարային վարկերի աճը զսպող քաղաքականությունը նույնպես կարող է էականորեն ազդել տնային տնտեսություններին տրամադրվող դոլարային


վարկերի ծավալների վրա: Եվ բացառված չէ, որ այս վարկերի ծավալների համեմատաբար կայուն մակարդակը պայմանավորված է հենց այս գործոնով:

Որոշակի մեկնաբանումներ կարելի տալ նաև այն հանգամանքին, որ տնային տնտեսություններին տրամադրվող դոլարային վարկերի ծավալները առաձգական չեն նաև տոկոսադրույքի աճի նկատմամբ: Այս երևույթը կարելի է մեկնաբանել այն հայտնի փաստով, որ շատ ձեռներեցների համար ինչպես վերջին տարիներին, այնպես էլ 2005-2008թթ եկամտի աղբյուր է հանդիսացել՝ ներմուծումը: Գործարարը, ունենալով դրամական միջոցներ, որը պետք է վերածի արտարժույթի, մասնավորապես դոլարի՝ ներմուծված ապրանքների ծախսերը հոգալու համար, կարող է վերցնել դոլարային սպառողական վարկ, օգտագործել այդ միջոցները գործարար նպատակներով, իսկ այն սպառողական ծախսերը, որոնք նախատեսված էին հոգալ վերցված դոլարային վարկով, իրականացնել այն դրամական միջոցներով, որոնք հակառակ դեպքում պետք է վերածվեին դոլարի՝ սեփական բիզնեսը ֆինանսավորելու համար: Հենց այս հանգամանքը կարող է պայմանավորել դոլարային վարկերի ծավալների կայուն պահանջարկն ու բավական զուսպ արձագանքը՝ տոկոսադրույքի աճին:

Այնուհետև իրականացվել է ՀՀ տնային տնտեսությունների ավանդների կառուցվածքի և դրա փոփոխման միտումների վերլուծություն: Օգտվելով ՀՀ ԿԲ՝ «առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալները»²⁸ հրապարակումում ամփոփված տեղեկատվություններից՝ հաշվարկվել է, որ ժամանակահատվածի վերջի դրությամբ ռեզիդենտների ժամկետային ավանդների մեջ տնային տնտեսությունների ժամկետային ավանդները վերջին տարիներին կազմում են կեսից ավելին²⁹: Հաշվարկները ցույց են տալիս, որ 2005-2010թթ ժամանակահատվածում տնային տնտեսությունների դրամային և դոլարային ժամկետային ավանդների ծավալների հարաբերակցությունները՝ ռեզիդենտների ժամկետային ավանդների ծավալներին աճել են համապատասխանաբար՝ 0.30-ից 0.70-ի և 0.60-ից 0.75-ի: Նշված փաստը վկայում է այն մասին, որ տնային տնտեսություններից ներգրավված ավանդները առևտրային բանկերի համար հանդիսանում են լուրջ ֆինանսական ռեսուրս, ինչը կարևոր է դարձնում դրանց կառուցվածքի ու վերջինիս վրա ազդող գործոնների հետազոտումն ու վերլուծությունը: Առևտրային բանկերի՝ ռեզիդենտներից և տնային տնտեսություններից ներգրավված դրամային և դոլարային ավանդների ծավալների դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

²⁸ <http://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

²⁹ Ռեզիդենտների ժամկետային ավանդները ներառում են՝ ձեռնարկություններից, տնային տնտեսություններից, շահույթ չհետապնդող կազմակերպություններից, այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ժամկետային ավանդները:



Գծապատկեր 2³⁰

Առևտրային բանկերի ավանդները՝ (ժամանակահատվածի վերջ, մլն. դրամ)

Այս գծապատկերից ակնհայտ երևում է, որ արտարժույթային ավանդների ծավալները հատկապես վերջին երկու տարիներին էականորեն գերազանցում են դրամային ավանդների ծավալներին: Բնականաբար կարելի է ենթադրել, որ արտարժույթային ավանդները ընդհանուր ավանդների ծավալի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն: Այս հարաբերակցությունը ստորև ներկայացված է աղյուսակով:


Աղյուսակ 4

Տնային տնտեսությունների արտարժույթային և ընդհանուր ավանդների ծավալների հարաբերությունը

	2005	2006	2007	2008	2009	2010
Մարտ	0.89	0.86	0.70	0.49	0.81	0.84
Հունիս	0.86	0.83	0.63	0.49	0.81	0.81
Սեպտեմբեր	0.88	0.79	0.59	0.47	0.82	0.80
Դեկտեմբեր	0.87	0.72	0.49	0.55	0.82	0.80

Վերլուծությունը ավելի համակողմանի դարձնելու համար ուսումնասիրվել է ավանդների ծավալների փոփոխությունները՝ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ: Հաշվարկների արդյունքում ստացված պատկերը ներկայացված է գծապատկեր 3-ում:

³⁰ Գծապատկերը ստացվել է ՀՀ ԿԲ «առևտրային բանկերի կողմից ներգրավված անդների ծավալները» հրապարակման հիման վրա: Աղբյուրը՝ <http://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>



Գծապատկեր 3

Նախորդ ժամանակահատվածի նկարմամբ ավանդների ծավալը³¹

Մեկնաբանելով գծապատկերը 3-ը՝ նշենք, որ զրոյական գիծը նշանակում է, որ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ փոփոխություն չի եղել: Դրանից բարձր և ցածր հատվածները ցույց են տալիս համապատասխանաբար՝ նախորդ ժամանակահատվածի համեմատ աճն ու անկումը: Գծապատկերից երևում է, որ բանկերից ընդհանուր ավանդների զգալի արտահոսք եղել է միայն 2010թ. 2րդ եռամսյակում: Մնացած զրեթե բոլոր ժամանակահատվածներում ընդհանուր ավանդների ծավալները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ աճել են, այդ թվում նաև այն ժամանակահատվածում, երբ տեղի է ունեցել դրամային ավանդների կտրուկ անկում և արտարժութային ավանդների կտրուկ աճ: Այսինքն, դրամային արտահայտմամբ արտարժութային ավանդների աճը մի մասով պայմանավորված է դրամային ավանդների կոնվերտացիայով, մյուս մասով՝ արտարժութային նոր միջոցների ներհոսքով: Կոնկրետ թվերով արտահայտված՝ 2009թ մարտին առևտրային բանկերում դրամային ավանդների ծավալը 2008թ դեկտեմբերի նկատմամբ նվազել է 34 մրդ. դրամով, իսկ արտարժութային ավանդների ծավալը աճել է 58 մրդ. դրամով: Ուստի, կարելի ասել, որ այդ ժամանակահատվածում տեղի է ունեցել 34 մրդ դրամի կոնվերտացիա դրամային ավանդներից արտարժութային ավանդների և շուրջ 24 մրդ. դրամի արտարժութային ավանդների ներհոսք: Այս երևույթը մեկնաբանելու համար նշենք, որ դա այն ժամանակահատվածն է, երբ դրամ-դոլար փոխարժեքը 2009թ մարտին աճեց շուրջ 60 դրամով³²: Փաստորեն կարելի է փաստել, որ փոխարժեքի նման տատանումը խթան է հանդիսացել բանկերում ավանդների ծավալների ավելացման համար: Ջուզահեռներ անցկացնելով՝ նշենք, որ 2010թ. հունիսին ավանդների ծավալների կրճատումը ուղեկցվել է դրամ-դոլար փոխարժեքի անկմամբ:

³¹ Գծապատկերը ստացվել է սեփական հաշվարկների արդյունքում՝ ՀՀ ԿԲ «առևտրային բանկերի կողմից ներգրավված անդների ծավալները» հրապարակման հիման վրա: Աղբյուրը՝ <http://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

³² ՀՀ ԿԲ Վիճակագրական տեղեկագիր 2009, էջ 66

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքները, ձևակերպված են հետևյալ եզրակացությունները՝

Ատենախոսության շրջանակներում արված հետազոտությունների, տեսական և էկոնոմետրիկ վերլուծությունների արդյունքում հանգել ենք մի շարք կարևոր եզրակացությունների, որոնք ներկայացված են ստորև:

1. ՀՀ տնային տնտեսությունների սպառողական վարքագծի վրա ազդող գործոնների վերլուծության շրջանակներում մշակված բազմագործոն ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքներից հանգել ենք այն եզրակացության, որ ՀՀ տնային տնտեսությունների՝ ընթացիկ ժամանակահատվածում տնօրինվող համախառն եկամուտների մեկ միավորով աճը հանգեցնում է նրանց վերջնական սպառման ծախսերի ավելացման՝ 0.48 միավորով: Սակայն իրականացված հաշվարկները ցույց են տալիս, որ տնային տնտեսությունները խնայողությունները պարբերաբար զրոյանում են: Այսինքն, տնային տնտեսությունները իրենց ընթացիկ եկամուտների կեսից ավելին ոչ թե խնայում են, այլ տնտեսում՝ տրամադրելով հետաձգված սպառմանը:

2. Բացահայտվել է, որ դրամային վարկերի տոկոսադրույքի նույնիսկ չնչին աճը հանգեցնում է վարկերի ծավալի զգալի կրճատման և հակառակը, մինչ իրավիճակն այլ է դոլարային վարկերի պարագայում:

3. Բացահայտվել է, որ 2009թ մարտին, երբ դրամ-դոլար փոխարժեքը 2009թ մարտին աճեց շուրջ 60 դրամով, առևտրային բանկերում դրամային ավանդների ծավալը 2008թ դեկտեմբերի նկատմամբ նվազել է 34 մրդ. դրամով, իսկ արտարժույթային ավանդների ծավալը աճել է 58 մրդ. դրամով: Ուստի, կարելի ասել, որ այդ ժամանակահատվածում տեղի է ունեցել 34 մրդ դրամի կոնվերտացիա դրամային ավանդներից արտարժույթային ավանդների և շուրջ 24 մրդ. դրամի արտարժույթային ավանդների ներհոսք: Այս վերլուծության արդյունքում հանգում ենք եզրակացության, որ փոխարժեքի նման տատանումը խթան է հանդիսացել բանկերում ավանդների ծավալների ավելացման համար: Զուգահեռներ անցկացնելով՝ նշենք, որ 2010թ. հունիսին ավանդների ծավալների կրճատումը ուղեկցվել է դրամ-դոլար փոխարժեքի անկմամբ: Արդյունքում արվել է եզրակացություն, որ դրամ-դոլար փոխարժեքը և դրա հետ կապված սպասումները հանդիսանում են ավանդների ինչպես կառուցվածքի, այնպես էլ ծավալների վրա մեծ ազդեցություն ունեցող գործոններից մեկը:

4. Հաշվարկների արդյունքում բացահայտվել է, որ տվյալ ժամանակահատվածում առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններից ներգրավված դոլարային ավանդների ծավալները էականորեն գերազանցում են դրամային ավանդների ծավալներին՝ չնայած, որ դրամային ավանդների միջին կշռված տոկոսադրույքները գերազանցում են դոլարային ավանդների միջին կշռված տոկոսադրույքներին: Արվել է

համապատասխան եզրակացություն, որ ՀՀ բնակչության համար բանկերում ավանդներ ներդնելու համար տոկոսային եկամուտներ ստանալը միակ շարժառիթը չէ և հետևաբար նպատակահարմար չէ այն դիտարկել, որպես բանկերում ավանդների ծավալները ավելացնելու համար կիրառվող հիմնական լծակ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Մկրտչյան Տ.Վ., «Բնակչության ֆինանսական վարքագծի վերլուծության տնտեսահոգեբանական տեսությունները», Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան 2010, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 438-442
2. Մկրտչյան Տ.Վ., «Տնային տնտեսությունների փոխառուական վարքագծի վրա ազդող գործոնների վերլուծություն», Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան 2011, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 298-308
3. Մկրտչյան Տ.Վ., «Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտների, վերջնական սպառման ծախսերի և խնայողությունների փոխառնչությունը», Հայաստանի Հանրապետությունում, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Գիրք 2, Երևան 2011, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 351-356
4. Մկրտչյան Տ.Վ., «ՀՀ տնային տնտեսությունների ավանդների կառուցվածքը, դրա փոփոխման միտումներն ու վերջինիս վրա ազդող գործոնները», Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Գիրք 2, Երևան 2011, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 356-361

Мкртчян Тигран Вачаганович
“Соотношений доходов, расходов и сбережений населения
(теория и практика)”

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01-“Экономическая теория”.

Защита диссертации состоится 09 июля 2013г. в 15:00 на заседании специализированного совета 015 по экономике ВАК РА Ереванского государственного университета по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

В изучении соотношений доходов, расходов и сбережений населения ключевым является экономическое поведение населения, которое посредством своей функциональной значимости ведет к утверждению условий их жизнедеятельности. Соотношение между потреблением и сбережением является одним из основных факторов воспроизводительного процесса, который может воздействовать на экономическую ситуацию в стране.

Из вышесказанного вытекает необходимость провести всесторонний анализ экономических и психосоциальных факторов, воздействующих на экономическое поведение домохозяйств в Армении, мотивы потребительского и сберегательного поведения, соотношений доходов, расходов и сбережений.

Целью данной диссертации является выявление соотношений доходов, расходов и сбережений населения, а также анализ видов экономического поведения населения, экономических и психосоциальных факторов воздействия, на основе официальных статистических данных РА.

Для реализации данной цели были поставлены следующие задачи:

- ✓ Проведение анализа основных теоретических положений потребления и сбережения среди населения,
- ✓ Проведение анализа влияния различных факторов - как экономических, так и социально-психологических – на экономическое поведение населения,
- ✓ Различение видов потребительского поведения домохозяйств и типизация сбережений,
- ✓ Проведение анализа соотношения доходов, конечных потребительских расходов и сбережений домохозяйств населения РА и квартального анализа сезонности,
- ✓ Разработка регрессионной модели для выявления воздействия уровня доходов населения, индекса потребительских цен, а также объема и процентной ставки по кредитам, предоставляемым коммерческими банками, на конечные потребительские расходы домохозяйств,
- ✓ Проведение анализа структуры и динамики срочных депозитов,

привлеченных от физических лиц коммерческими банками РА, и воздействующих факторов.

Основные результаты и научная новизна:

В ходе исследования и анализа в рамках данной диссертации был достигнут ряд результатов теоретического, методического и практического значения. Основные положения, отражающие научную новизну, сводятся к следующему:

1. Проведено различение сущности и характера сбережений населения. Выдвинуты концепции “текущих сбережений”, “сбережений первой необходимости”, “сбережений, обусловленных определенным сроком” и “сбережений, обусловленных определенным объемом”, представлены экономическая интерпретация данных концепций и принципиальные отличия от видов сбережений, предложенных другими авторами.
2. Выявлено, что конечные потребительские расходы домохозяйств за первый квартал за все годы превышают их валовой доход, находящийся в их распоряжении, тем самым предавая отрицательное значение сбережениям. Также выявлено, что за годы объем расходов домохозяйств показывает тенденцию роста, параллельно с увеличением доходов, наряду с относительно стабильным объемом сбережений, не считая сезонность.
3. Разработана и введена новая в РА многофакторная регрессионная модель для выявления воздействия объема и процентной ставки по кредитам, предоставляемым домохозяйствам коммерческими банками, а также валового дохода, находящегося в распоряжении домохозяйств и потребительских цен на конечные потребительские расходы домохозяйств,
4. В результате расчетов и анализов, проведенных на основании статистических данных ЦБ РА, было обосновано, что структура и объем депозитов подвержены большому влиянию как фактического колебания обменного курса, так и ожиданий населения, связанных с подобными колебаниями. Разработана новая эконометрическая регрессионная модель для выявления зависимости депозитов от доходов и процентной ставки.

Mkrtchyan Tigran Vachagan

“Correlations among population income, expenditure and savings (theory and practice)”

The Dissertation is submitted for the pursuing of the scientific degree of a Candidate of Economic Sciences in the field of “Economic theory” 08.00.02

The Defense of the Dissertation will take place on July 09-th, 2013, at 15:00, at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52, Abovyan Street, Yerevan 0009, Armenia

Summary

Public economic behavior is essential to study the correlation among population income, expenditure and savings. Such behavior leads to strengthening life conditions due to its functional significance. The consumption and saving ration is a key factor of reproductive process that may affect the economic situation in the country.

Therefore, it appears quite necessary to conduct a comprehensive analysis of social and psychosocial factors affecting the economic behavior of Armenian households, motivations for consumption and saving behavior, correlations among income, expenditure and savings.

The goal thesis to find the correlation among population income, expenditure and savings, analyze types of public economic behavior and their economic and socio-psychological factors, based on the official statistics of the RA.

To achieve this goal, the objectives below have been set:

- Analyze theoretical foundations of public consumption and savings;
- Analyze the impact of both economic and socio-psychological various factors on public economic behavior;
- Distinguish types of consumer behavior of households and typify savings;
- Conduct analysis of correlation among the income, final consumption expenditure and savings of Armenian households and quarterly seasonal analysis;
- Develop a regression model to reveal the impact of population income, consumer price index as well as volume and interest of loans on household final consumption expenditure;
- Analyze the structure and dynamics of term deposits attracted by RA commercial banks from individual and relevant critical factors.

Key outcomes and scientific novelty

- The essence and nature of population savings were differentiated. The following concepts were presented: ‘ongoing savings’, ‘savings of first importance’,

'fixed time savings' and 'fixed volume savings' along with their economic interpretation, as well as radical difference from saving types classified by other authors;

- Household final consumption expenditures as of the first quarter of every year considered were found to exceed the gross income managed by households and thus gave negative value to savings. Also, it was revealed that annual scope of household expenditure over the years has shown a growth trend along with income growth, while volumes of savings seem relatively stable, except for the seasonal fluctuations;

- A multifactor regression model, still novice in the RA, was designed and introduced to estimate the impact of volume and interest rates of loans provided to households by commercial banks, gross incomes managed by households and consumer price index on household final consumption expenditure;

- Estimates and analyses based on statistics of CB of RA have grounded that the structure and volume of deposits is greatly affected by both actual exchange-rate fluctuation and related public expectations. A new econometric regression model was designed to reveal the dependence of deposits on income and interest rate.